ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Մխիթարյան միաբանությունը 2018թ. հոկտեմբերի 19-ին Երևանում կազմակերպում են «Բազմավէպ» հայագիտական հանդեսի 175-ամյակին նվիրված գիտաժողով:

Լինելով ցայսօր հրատարակվող հայերեն ամենաերկարակյաց պարբերականը, որի էջերում արծարծվել և վերլուծվել են ազգային կյանքի կարևորագույն ու հրատապ խնդիրներ, հրապարակվել բնագիտական, տնտեսագիտական, պատմագիտական, բանասիրական, աստվածաբանական, լեզվաբանական, մատենագիտական, գեղարվեստական, ուսումնական և Հայ եկեղեցու պատմությանն առնչվող հազարավոր արժեքավոր նյութեր, «Բազմավէպ»-ը մեր օրերում էլ ամենանշանավոր հայ պարբերականներից է և շարունակում է ներկայանալ հայագիտական հարուստ ու արժեքավոր նյութերով:

Հանդեսի հոբելյանին նվիրված գիտաժողովը կլինի նաև գնահատանքի յուրօրինակ դրսևորում: Գիտաժողովում կներկայացվեն զեկուցումներ ըստ հայագիտության տարբեր ուղղությունների, կծավալվեն բանավեճեր ու քննարկումներ:

Իրենց մասնակցությամբ գիտաժողովը կպատվեն պետական այրեր, հոգևոր հայրեր, հայտնի մտավորականներ Հայաստանից և արտերկրից:

Գիտաժողովը տեղի կունենա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում (ք. Երևան, Բաղրամյան պողոտա, 24) սույն թվականի հոկտեմբերի 19-ին, սկիզբը՝ ժամը 10^{00}-ին:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝

ՀՀ սփյուռքի նախարարություն
Հեռ.՝ 010 585 601 (701), 060 500 710
Էլ. հասցե՝ panarmeniaorg@gmail.com,
hmekv@mindiaspora.am

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Հեռ.՝ 010 581 853
Էլ. հասցե՝ viktor-katvalyan@mail.ru